«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Դասվար, հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Ալավերդյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ, Արտաշատի N4 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

§1. 1Գրաճանաչության նախայբբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրները 4

§1. 2 Նախաայբբենական փուլի իրականացվողաշխատանքի

Բովանդակությունը 9

Եզրակացություններ 16

15. Օգտագործված գրականություն 17

Ներածություն

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական շրջան, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, նախադպրոցական տարիքի երեխաների առանձնահատկություններով, կրթօջախի տեսակով և կրթության՝ այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներ:

Արդի ժամանակներում առավել կարևորվում է 5-6 տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը նախապատրատվելու հարցը:

Նախադպրոցական տարիքի երեխայի համար պետք է ոչ փոքր տեքստերով շատ հեքիաթներ կամ զանազան պատմություններ կարդալ: Խոսքի զարգացումը, գրագիտությունն անմիջականորեն կախված են երեխային շրջապատող միջավայրի գրագետ խոսքի հագեցածությունից: Ելնելով դպրոց ընդունվող երեխաներին ներկայացվող արդի պահանջներից՝ հանձնարարվում է ավագ խմբում իրականացնել վաղ գրաճանաչության նախապատրաստում, որը հանդիսանում է մայրենի լեզվի բաժնի բաղադրիչներից մեկը:

Վերլուծական, համադրական խոսքային վարժությունների համակարգի միջոցով ապահովվում է երեխաների մտավոր զարգացումը: Մտավոր զարգացումը կառուցվում է 5-6 տարեկան երեխաների կենդանի խոսքի, խոսքային կենսափորձի, կապակցված խոսքի համակարգի, խոսքային լսողության զարգացման հիման վրա: Երեխաներին պատկերացում է տրվում նախադասության– բառ – վանկ -հնչյուն վերլուծական շղթայի մասին:Այս պարապմունքների միջոցով ոչ միայն զարգանում են երեխաների մտավոր կարողությունները, այլև հոգեկան գործընթացները՝ ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, նաև՝ կամքը, հույզերը, զգացմունքները, զգայարանները, այսինքն՝ ողջ հոգեկան աշխարհը՝ ազդելով զարգացումն ապահովող բոլոր բաղադրիչների վրա, որոնցով պայմանավորվում են ուսուցման գործընթացի նպատակների և խնդիրների իրականացումը:

Գլուխ 1. Նախապայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

§1. 1Գրաճանաչության նախապայբբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրները

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական շրջան, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, նախադպրոցական տարիքի երեխաների առանձնահատկություններով, կրթօջախի տեսակով և կրթության՝ այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներ: Գրաճանաչության նախապայբբենական շրջանի հիմնական խնդիրներն

են.

1. Կազմակերպական խնդիրներ.

1. երեխաների ծանոթացում նրանց համար նոր ուսումնական գործունեությանը.

• ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,

• աշակերտների ծանոթացումը միմյանց հետ, մանկական կոլեկտիվի ստեղծում,

• ծանոթություն կրթական տվյալ հաստատության կարգուկանոնին, դպրոցականշենքին,

• ծանոթություն երեխաների իրավունքներին և պարտականություններին,

• աշակերտական նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելու և ձայն խնդրելու, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնելու ունակությունների մշակում,

• ուսուցչին, ընկերներին և իրեն դիմած յուրաքանչյուրին բարձրաձայն, հստակ և ամբողջական խոսքով պատասխանելու կարողության ձևավորում, ուսուցչի խոսքը լսելու, հասկանալու նրա տված հանձնարարությունները կատարելու ունակությանզարգացում,

• ընկերներին, ուսուցիչներին և միջավայրի մարդկանց լսելու և նրանց խոսքինբարեկիրթ արձագանքելու ունակության ձևավորում,

• գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքիկանոնների յուրացում:

Գրաճանաչության ուսուցման նախապատրաստական շրջանի հիմնական նպատակը երեխաներին միասնական դասարանական կոլեկտիվում ընդգրկելը, գրել, կարդալ սովորելու աշխատանքի համար նրանց տեսականորեն ու գործնականորեն, հոգեբանորեն ու ֆիզիկապես նախապատրաստելն է։

Նախապատրաստական շրջանը ոչ միայն անհրաժեշտ, այլև խիստ կարևոր է սովորողների համար, որովհետև հետագա ուսումնական գործընթացի ամբողջ հաջողությունը մեծ չափով կախված է նաև աշակերտների դպրոցի համար լավ նախապատրաստված լինելուց։

Այս շրջանում հիմնականում բնորոշ են հետևյալ խնդիրները՝ աշակերտներ ծանոթացումը դպրոցի կարգուկանոնին, երեխաների խոսքի զարգացումը, տեսողության, լսողության, կինեսթետիկ զգացողության և ուշադրության մշակումը, գրելու համար ձեռքի նախապատրաստումը, կարդալու սկզբնական կարողության ձևավորնամ համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդում և այլն։

2. Ուսումնական խնդիրներ։ Ուսումնական գործունեությանը երեխաների պատրաստականության մակարդակի բացահայտում.

Այս խնդրի ուսումնասիրությունն ուսուցիչն իրականացնում է մինչև ուսումնական տարվա սկսելը։ Ուսուցիչը պիտի ուսումնասիրի դասարանի աշակերտների անձնական գործերը, զրուցի ծնողների հետ, հանգամանորեն հետաքրքրվի նրանց առողջական տվյալներով, ակնառու, ընդգծված առանձնահատկություններով։

Երեխաների պատրաստականության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին՝ գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար։ Ծանոթությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի շուրջ կազմակերպվող ակտիվ զրույցի, պարզ առաջադրանքների կատարման ճանապարհով։ Արդյունքներն ամփոփելու համար ուսուցիչը պիտի պարզի յուրաքանչյուր աշակերտի՝

ա) խոսելու, բացատրվելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցիչներին լսելու, հասկանալու, ուսուցչի հանձնարարությունները կատարելու, ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը,

բ) հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը.

• Բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ։

- Հնչյուններն արտասանում է ճիշտ, մաքուր, անխառն կամ որոշակի սխալներով(ունի լեզվական արատ):

- Ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն խոսք:

- Ունի արտահայտիչ խոսք:

գ) բանավոր կապակցված խոսք.

- Ունի իր տարիքին համապատասխան բառապաշար և կարողանում է տրամաբանված, պատճառահետևանքային կապերի ճիշտ մեկնաբանմամբդատողական և գնահատող խոսք կառուցել:

- Անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ:

- Գիտի և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները (ինքնուրույն կամ հարցերի օգնությամբ), հիշում է դրանց հերոսներին,

գործողությունները, վարքը, կարծիքներ է հայտնում նրանց մասին և հիմնավորում է դրանք:

- Ուսուցչի հարցերի օգնությամբ կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ կազմել մեկ–երկու՝ մտքով իրար հետ կապված

նախադասություն:

- Ուսուցչի, տարեկիցների և ավագների հարցերին պատասխանում է ընդարձակ(համառոտ) և ավարտուն նախադասություններով:

- Ուսուցչի կամ օտար մարդկանց ներկայությամբ կաշկանդված չէ, խոսում էտրամաբանված և ըստ էության:

դ) խոսքի շարահյուսական կառույցը.

- Կազմված է հստակ կառուցվածք ունեցող շարահյուսորեն ավարտուն, պարզնախադասություններով:

- Կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով:

- Կապակցված խոսքում օգտագործած նախադասությունների միջև բացակայում ենտրամաբանական, պատճառահետևանքային կապերը:

- Չունի ամբողջական նախադասություններ կառուցելու կարողություն:

- Նախադասությունները թողնում է անավարտ և անցնում է նոր

մտքի:ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Այս և ուսուցչի կողմից արժևորվող այլ տվյալները նրան պետք են ոչ թե ըստ երեխաների գիտելիքների և կարողությունների մակարդակի դասարանները ձևավորելու, այլ դրանք ուսումնական գործընթացում հաշվի առնելու և ըստ դրանց իր ծրագիրն ու պարապմունքները կառուցելու, իր ուսումնական ռազմավարությունը որոշելու, աշակերտների հետ տարվող ֆրոնտալ, փոքր խմբերով և անհատական աշխատանքները պլանավորելու և նախատեսածին համապատասխան իրականացնելու, ծնողների հետ անհրաժեշտ աշխատանք տանելու համար:

Գրաճանաչության նախաայբբենական շրջանի պարապմունքները կառուցվում են՝ հաշվի առնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները, հոգեկան գործընթացների, մասնավորապես ուշադրության, մտածողության և հիշողության առանձնահատկությունները. երեխաները

երկար ժամանակ չեն կարող լսել, զբաղվել միևնույն գործողությամբ, արագ հոգնում են և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց գործունեության ձևերը փոխել յուրաքանչյուր 10–15 րոպեն մեկ՝ դասի յուրաքանչյուր փուլում պարապմունքն իրականացնելով դասի ընդհանուր պլանին և նպատակին համապատասխան: Դասերի ժամանակ նախատեսվում են հետաքրքրաշարժ և խաղային պահեր. հանելուկների գուշակում, հեքիաթների պատմում, դրանց բեմադրում, ազատ կամ թեմատիկ նկարչություն, երգ, պար, ռիթմիկա և այլն: Նախաայբբենական շրջանի դասի հիմնական մեթոդական շղթան (շղթայի քայլերն իրականացվում են 2 դասաժամի ընթացքում).

1. կազմակերպական պահ.

2. տնային աշխատանքի ստուգում.

3. ֆիզկուլտ դադար.

4. անցած ուսումնական նյութի կրկնություն, ամրակայում.

5. հանձնարարված թեմայի կամ թեմատիկ նկարների շուրջ հարցազրույց.

6. շարժուն խաղեր.

7. հնչյունային վերլուծություն, նոր նյութի հաղորդում.

8. դիդակտիկ և հետաքրքրաշարժ խաղեր.

9. նոր նյութի ամրակայում, մարզողական վարժություններ.

10. մատները գրելուն նախապատրաստող վարժություններ.

11. գրում.

12. ամփոփում:


Նախաայբբենական շրջանի ուսումնական խնդիրները
1. Խոսքի զարգացում
2. Հնչյունային լսողություն
3. Գրելուն նախապատրաստում
4. Մտածողություն
Բառապաշարի մաքրում
Բառապաշարի հարստացում
Հնչյունի մաքուր, անխառ
Բառի մեջ հնչյունի տեղի
Մատներ ի ֆալանգ-ների
Տետրում կողմնորոշվելու կարողություն
Լեզվամտածողություն, հաղորդակցական կարողություն
Բարձրագույն մտածողություն. բաղադ
Կապակցված խոսքի
Առաջարկվող հնչյուններով բառերի արտասանություն. բառասկզբում,
Հայերեն տառամասնիկներ ի ուսումնասի
Հոգեկան գործընթացների և զգայարանների

§1. 2 Նախաայբբենական փուլի իրականացվող աշխատանքի բովանդակությունը

Այս շրջանում աշակերտները յուրացնում են գրաճանաչության ուսուցման արդյունավետության համար կարևոր լեզվական մի շարք հասկացություններ՝ գործնականորեն նախապատրաստվելով կարդալու և գրելու գործընթացներին:

- Խոսք: Մեծադիր թեմատիկ նկարի շուրջ ուսուցչի հարցերի օգնությամբ երեխաները կազմում են մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն, որոնց

ամբողջությունը հետագայում նրանք անվանում են պատմություն: Ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություններ են հյուսում, վերարտադրում են ունկնդրած փոքրիկ պատմվածքները և հեքիաթները: Այնուհետև գաղափար է տրվում գծապատկերի մասին՝ նշելով, որ պատմությունը կարելի է գրել նույնիսկ առանց տառերը ճանաչելու:

Ուսուցիչը գծում է մի ուղղանկյուն և ասում.

– Պատմությունը տեղավորված է այս վանդակի մեջ: Այսինքն՝ վանդակը պատմության տնակն է: Ուրեմն մենք ինչ պատմություն էլ որ հյուսենք, կարող ենք տեղավորել այսպիսի () տնակում:

Խոսքի զարգացման նպատակով անհրաժեշտ է պարբերաբար աշխատանք տանել ոչ միայն նկարների շուրջ մեկ–երկու՝ մտքով իրար հետ կապված նախադասություններ կազմելու կարողության մշակման, այլև երեխաներին անընդհատ խոսեցնելու ուղղությամբ՝ խոսքը զուգորդելով համարժեք գործողություններով:

Առաջին շրջանում ուսուցիչն ինքը պիտի տա խոսքի նմուշ:

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Մինչև երեխան չխոսի, իր մտքերն ազատ և համարձակ չարտահայտի, նա ուսումնական գործունեության մեջ առաջընթաց չի ապրի: Իսկ փոքրիկին անծանոթ միջավայրում խոսեցնելը դժվար է: Այդ դժվարության հաղթահարման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ մթնոլորտ՝ ազատություն, անկաշկանդություն, հանդուրժողականություն, սեր և գուրգուրանք:

Հայտնի է, որ յուրաքանչյուր գործունեության իրականացումից առաջ մարդը պիտի զգա դրա կարիքը, պահանջը: Ա. Լուրիան գրել է. «Ամեն մի խոսքային արտահայտության համար ելակետային է դրանում որոշակի բովանդակություն ներկայացնող պահանջմունքը» :

Նախաայբբենական շրջանում իբրև նմուշօրինակ ուսուցչի հյուսած պատմությունը պետք է՝

• հնչի հանդարտ, պարզ, երեխաներին ընկալելի ոճով,

• կազմված լինի 3–4 նախադասությունից,

• նախադասությունները կազմված լինեն 2–3 բառից,

- նախադասությունների կազմի մեջ մտնող բառերը վերցված լինեն երեխաների ակտիվ բառապաշարից (նրանք պետք է հասկանան դրանց իմաստը),

• խոսքը պետք է զուգորդվի ցուցադրումներով:

- Գաղափար նախադասության մասին: Թեմատիկ նկարների շուրջ պատմություն հյուսելու, ազատ, ինքնուրույն խոսք կառուցելու տարրական կարողության

ձևավորումից հետո պիտի մշակել ուսուցչի հարցերի օգնությամբ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակություն: Բնականաբար, երեխաների համար միանգամից դժվար է զգալ պատմության կազմի մեջ մտնող նախադասությունների սահմանները: Այդ կարողության մշակման համար ուսուցիչը դանդաղ, նախադասություն առ նախադասություն պիտի արտասանի պատմությունը՝ առաջարկելով երեխաներին ծափերի միջոցով հաշվել, թե այն քանի մասից է կազմված: Ուսուցիչը երեխաների օգնությամբ պատմության գծապատկերը բաժանում է համապատասխան թվով մասերի՝ բացատրելով, որ այս մասերից յուրաքանչյուրը պատմության մեկ մասն է և մեկ միտք է արտահայտում: Ապա միտք բառի փոխարեն երեխաները սովորում են գործածել նախադասություն բառը և գծել նախադասության գծապատկերը: Այնուհետև պիտի բացատրել, որ ամեն մի նախադասություն պետք է սկսել մեծատառով (գծապատկերի սկիզբը նշվում է հոծ գծով) և վերջում դրվում է վերջակետ:

- Գաղափար բառի մասին: Նախադասությունը վերլուծելու և նրա բաղադրիչները դիտարկելու մի-ջոցով աշակերտները գաղափար կկազմեն բառի մասին, որպեսզի

բառն ամենից առաջ ընկալվի որպես նախադասության բաղադրիչ մաս և ապա նոր՝ որպես որոշակի իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր: Ուսուցչուհու օգնությամբ նախադասության գծապատկերը բաժանվում է մասերի: Այնուհետև մաս բառը փոխարինվում է բառով: Իբրև բառ է ներկայացվում նաև է օժանդակ բայը:

Նախաայբբենական շրջանում շահեկան է բառ հասկացությունը կապել որոշակի իմաստի, զգայական ընկալման հետ. այդ նպատակով վերլուծության համար ընտրված բոլոր բառերը պետք է առարկայական լինեն, պիտի առնչվեն թեմատիկ նկարի կամ նկար–նախադասության բովանդակությանը, որպեսզի երեխաների համար պարզ լինի, թե որտեղից են վերցված այդ բառերը, ինչով են դրանք առնչվում կենդանի խոսքին, կարևոր է, որ աշակերտները հասկանան առարկայի և բառի

տարբերությունը (գրչով կարելի է գրել, իսկ գրիչ բառով գործողություն կատարել հնարավոր չէ. կարելի է գրել, կարդալ)։

Որպեսզի երեխաները հասկանան, թե ինչ դեր ունեն բառերը նախադասության մեջ, կարելի է կազմակերպել «Մենք նախադասության բառեր ենք» խաղը:

Բառի կազմությունը: Վանկ: Վանկի մասին գաղափարը կարելի է ձևավորել միայն այն ժամանակ, երբ բառի մասին ձեռք բերած հասկացությունն ամրակայվել է: Ցանկալի է, որ այն ունենա երկու վանկ, իսկ հետո կարելի է աշխատել եռավանկ, քառավանկ բառերի շուրջ: Ուսուցչուհին նախ ընտրված բառն արտասանում է՝ առանց վանկերի բաժանելու, ապա՝ վանկերի բաժանելով: Շահեկան է այս աշխատանքն իրականացնելիս ցուցադրել այն առարկաները կամ նրանց նկարները, որոնց անվանումների շուրջ իրականացվում է վանկային աշխատանքը: Երեխաները գալիս են այն համոզման, որ շրջապատում կան առարկաներ, որոնց անունները կարելի է արտասանել մեկ ծափով, երկու ծափով և այլն: Նրանց պետք է բացատրել, որ այդ ծափերի թիվը պայմանավորված է բառերի մասերի քանակով:

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Բառի կազմում վանկերի առկայությունը երեխաներին զգալ տալու համար կարելի է օգտագործել նաև երգը, որովհետև այս դեպքում բառերը պարտադիր կերպով բաժանվում են վանկերի: Վանկի մասին տրված գաղափարի ամրապնդմանը կարող են նպաստել նաև առարկայական նկարների շուրջ կատարվող դասդասումները և վանկային վարժությունները կամ վանկախաղերը: Այսպես, օրինակ՝

1. Ուսուցիչը կամ երեխաներից մեկն ասում է երկվանկ կամ եռավանկ բառի մի մասը, իսկ խաղընկերը լրացնում է մյուս մասը և ստանում բառ….:

2. Ուսուցիչը կամ աշակերտներից մեկը՝ խաղավարը, գնդակը նետում է շրջանով կանգնած երեխաներից մեկին և ասում է որևէ բառ, իսկ գնդակը բռնողը պետք է կարողանա այն վանկերի բաժանել: Աշակերտները երբ կկարողանան տրված բառը մասերի բաժանել, ասել, թե այն քանի մասից է կազմված, արդեն կարելի է գործածել եզրույթը՝ ասել, որ բառի այդ մասերին անվանում ենք վանկ:

Բառը վանկերի բաժանելու, վանկերն իրար միացնելով բառեր ստանալու, բառի մեջ վանկի տեղը գտնելու կարողությունների զարգացման նպատակով կարելի է կատարել վարժություններ, խաղալ դիդակտիկ խաղեր: Օրինակ՝ կարելի է կազմակերպել «Ո՞ր առարկան չկա» խաղը:

- Գաղափար հնչյունի մասին: Ուսուցչի հանձնարարությամբ երեխաներն ասում են միավանկ բառեր: Ուսուցիչի պահանջով գրատախտակին գծում այն բառերի գծապատկերները, որոնք թեև միավանկ են, բայց ունեն տարբեր քանակի հնչյուններ (ուլ, շուն, մուկ և այլն): Բնականաբար, դրանց հնչյունային գծապատկերները տարբեր կառուցվածք կունենան. բառերը լինում են կարճ և երկար:

Համեմատաբար մատչելի է բաց վանկերի հնչյունային վերլուծությունը: Վերջինս առավել բարդանում է, երբ երեխան առանց վանկատելու փորձում է մի քանի անգամ արագ արտասանել բառը. այս դեպքում թույլ հնչող բաղաձայնը կարող է դուրս ընկնել, ուժգին հնչողը գրվել և այլն:

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

ա) Անընդհատ պիտի օգտագործել հնչում բառը, որպեսզի երեխաներն ընտելանան բառին, մտապահեն՝ հետագայում հնչյուն բառը հնչումից բխեցնելու համար:

բ) Նախ երեխաների ուշադրությունը պիտի հրավիրել բառասկզբի հնչյունի, ապա՝ բառավերջի, հետո՝ բառամիջի հնչյունի վրա, որովհետև ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանք ամենից հեշտ լսում են բառասկզբի հնչյունը, ապա՝ բառավերջինը, հետո նոր՝ բառամիջինը:

- Գաղափար ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին: Ձայնավոր և բաղաձայն հնչյունները երեխաները պիտի սովորեն տարբերակել գործնական ճանապարհով՝ սա՛ ր (հնչում է սկզբինը, վերջինը):

Ուսուցչուհին ամփոփում է, որ ա արտասանելիս օդը բերանից դուրս է գալիս առանց արգելքի: Իսկ ս և ր-ի դեպքում ձայնն արգելքով է բերանից դուրս գալիս:

Բառի հնչյունային վերլուծությունն իրականացվում է մի քանի գործողությունների հաջորդաբար կատարման ճանապարհով.

1. Երեխան արտասանում է բառը՝ ցույց տալով բառի գծապատկերը:

2. Բառի մեջ հնչյունի առանձնացում ձայնի բարձրությամբ:

3. Բառից առանձնացնել և մեկուսի արտասանել այն հնչյունը, որն արտաբերվում էր երկար

4. Բառի հնչյունային վերլուծություն՝ գծապատկերի վրա գունավոր կավճով (տետրում՝ մատիտներով) նշելով համապատասխան հնչյունի վանդակը (ձայնավորը՝ կարմիր, բաղաձայնը՝ կապույտ):

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Որպեսզի յուրաքանչյուր երեխա ձեռք բերի հնչյունները տարբերակելու հմտություն, նա պիտի ինքնուրույն ասի բառը, գծի գծապատկերը և գունավորի համապատասխան վանդակները:

Հիշենք

Այս գործողությունները պիտի կրկնվեն գրաճանաչության նախաայբբենական շրջանի յուրաքանչյուր դասի ժամանակ: Այս աշխատանքներից հետո երեխաները պիտի ձևակերպեն եզրակացություններ, անշուշտ, ոչ սահմանման ձևով:

Եզրակացություն: Լեզվի բոլոր հնչյունները բաժանվում են երկու խմբի. մի խմբի հնչյուններն արտա սանվում են մինչև վերջ, և լսում ենք միևնույն հնչյունը: Դրանք ձայնավորներն են, այսինքն՝ ձայն ունեցող հնչյունները, իսկ մյուս խմբի մեջ մտնողները կարճ են արտասանվում, արագ վերջանում են ու շարունակվում են ը–ով: Դրանք բաղաձայններն են:

- Գրելու նախապատրաստում: Գրաճանաչության նախաայբբենական շրջանի կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը: Այդ աշխատանքներումկարևորվում են.

- մատների մանր ֆալանգների ամրացումը,
- ձեռքի դաստակի մարզումը,
- տեսողական հիշողության զարգացումը,
- գրելու ժամանակ հիգիենայի կանոնների կարևորության գիտակցումն ու դրանցպահպանման ունակության մշակումը,
- տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակումը,
- ուրվագծերով տրված նկարների գունավորում՝ առանց սահմաններն անցնելու,
- ձախից աջ գրության ապահովումը,
- հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակումը:

Այս խնդիրների լուծումը պիտի սկսել նկարչությունից, ծեփից, ապլիկացիայից և մատների մանր ֆալանգների ամրացման, դաստակի մարզման վարժություններից:

Սովորաբար երեխաները սիրում են նկարել և շատ են նկարում: Սակայն նպատակային նկարչությունն ունի իր խնդիրները.

- անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել գունավորել նկարն՝ առանց տրված պատկերների սահմաններն անցնելու՝ առաջարկելով նախ՝ մեծ, ապա՝ փոքրպատկերներ,
- մշակել ձեռքի՝ ձախից աջ գնացող շարժումներով, առանց տետրը շարժելու մեկուղղությամբ ներկելու ունակություն,
- սովորեցնել մատիտը ճիշտ բռնել,

- նկարչական տետրը դնել սեղանին 45° թեքությամբ և պահպանել տետրից աչքընկած տարածության սահմանը:

Նկարելու, ներկելու ժամանակ պիտի սովորեցնել, որ երեխաները ոչ միայն կարողանան լսել ուսուցչի բացատրություններն ու հրահանգները, այլև կատարեն դրանք: Անհրաժեշտ է նաև մշակել ներկելուց առաջ անելիքը ծրագրավորելու և այդ մասին պատմելու, խոսելու (ի՞նչ եմ նկարելու, ի՞նչ գույներ եմ օգտագործելու, ինչո՞ւ եմ այդ գույներն օգտագործելու և այլն) ունակություններ:

Տառամասնիկները գրել սովորեցնելիս պիտի նկատի ունենալ, որ երեխաները գրել են սովորելու ամբողջական տառերով: Մասնիկների գրուսուցումը պարզապես գրելու նախապատրաստում է:

Նախաայբբենական փուլի խնդիրներից է նաև երեխաների գրաֆիկական տեսողության զարգացումը, որպեսզի նրանք կարողանան տարբերել կողմերը՝ վերև, ներքև, աջ, ձախ, առարկաների ձևերը՝ կլոր, ձվաձև, քառակուսի, եռանկյունի, գծերը՝ ուղղահայաց, հորիզոնական, ուղիղ, թեք, կլոր, կետերը, տողերն ու տառամասնիկները:

Եզրակացություններ

Ուսումնասիրելով հետազոտական աշխատանքի թեման եկանք հետևյալ եզրակացություններին.

1. Թեման արդիական է և բավականաչափ ուսումնասիրված է ու կա հարուստ գրականության ցանկ։
2. Նախաայբբենական շրջանը կարևոր դեր է խաղում կրտսեր դպրոցականի հետագա ուսումնական գործնթացի մեջ, ուստի անհրաժեշտ է հետևողական, համակարգված և ճիշտ հերթականությամբ աշխատանքներ տանել նրանց հետ։
3. Նախաայբբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է։

Օգտագործված գրականություն

1. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան ,2018:

2. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան ,Լույս, 1980:

3. https://annadanielyan1987.wordpress.com